



Վանաձորի Օրհուս բնապահպանական տեղեկատվական կենտրոնի
2016 թ նոյեմբերի
գործունեության հաշվետվություն

ք Վանաձոր

2016թ, նոյեմբերի 30

Վանաձորի Օրհուս կենտրոնի գործունեության նպատակն է բարձրացնել տեղական կարողությունները բնապահպանական կառավարման հարցերի վերաբերյալ, ամրապնդել քաղաքապետարանի Տարեկան ծրագիրը և իրականացնել տեղական քաղաքացիական հասարակության և ոչ կառավարական շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

Վանաձորի Օրհուս կենտրոնի կողմից վերը նշված նպատակներին հասնելու ուղղությամբ 2016թ նոյեմբերի ընթացքում իրականացվել է հետևյալ գործունեությունը:

2016թ նոյեմբերի 1-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է ՌԵԿ Կովկաս հիմնադրամի կողմից իրականացվող <<Շրջակա միջավայրի տեղական գործողությունների ծրագրի>> շրջանակներում շահագրգիռ կողմերի հանձնախմբի հանդիպմանը: Հանդիպման մասնակիցներն էին տեղական կառավարման մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներ, գործարարներ, զանգվածային լրատվամիջոցներ: Հանձնախմբի կողմից իրականացվում է համայնքում հիմնախնդիրների բացահայտում, դասակարգում, շրջակա միջավայրի վրա բացասական ներգործություն ունեցող գործոնների ազդեցությունը նվազեցնող կամ չեզոքացնող առաջարկների մշակում, շրջակա միջավայրի գործողությունների պլանի վերջնական կազմում և հանձնում տեղական ինքնակառավարման մարմիններին:

Հանդիպման ընթացքում նաև քննարկվեցին հողօգտագործման, օդի որակի, մակերևութային և ստորգետնյա ջրերի, թափոնների կառավարման վիճակը և հիմնախնդիրները: Իրականացվեցին գործնական ուսումնական վարժություններ:

2016թ. նոյեմբերի 3-7 կենտրոնի կողմից ամփոփվել են Վանաձորում համայնքի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցություններին ուղղված հարցումների պատասխանները: Նպատակն է ծրագրային դրույթների շուրջ համագործակցություն համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հետ:

Նոյեմբերի 10-ին Հայաստանի անտառներ ՀԿ կողմից իրականացվեց հանդիպում-քննարկում, որի նպատակն է մասնագետների և հանրության մասնակցությամբ քննարկել Հայաստանի անտառների կառավարման բարելավմանն ուղղված կառուցվածքային և օրենսդրական փոփոխությունների նախագծերը: Հանդիպումը տեղի ունեցավ Լոռու

մարզպետարանի դահլիճում, մասնակցեցին լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, Հայաստանի Գուգարք, Եղեգնուտ և Լավար անտառտնտեսությունների ղեկավարներ և մասնագետներ, Վանաձորի բուսաբանական այգու ղեկավարը, ՀԿ ներկայացուցիչներ, պետական բնապահպանական տեսչության ներկայացուցիչ, Վանաձորի Օրհուս կենտրոնի համակարգողը: Հայաստանի անտառներ ՀԿ տնօրեն Նազելի Վարդանյանը ներկայացրեց փորձագետների կողմից կատարված վերլուծությունների արդյունքները, անտառների վիճակը, խնդիրները, կատարված առաջարկները: Քննարկվեցին սեցիալական ծանր պայմաններում գտնվող բնակչության կողմից վառելիքայտի օգտագործման հետ կապված

ծավալների աճի խնդիրները: Բոլոր մասնակիցների կողմից կարևորվեց Հայաստանի կարգավիճակի բարձրացումը, որը էլ ավելի կկարևորի անտառների պահպանումը և ավելի արդյունավետ անտառկառավարման սկիզբ կլինի:

Առաջարկվեց ավելի լայն օգտագործել նոր տեխնոլոգիաները՝ մասնավորապես սահմանամերձ բնակչության արևային ջրատաքացուցիչների օգտագործումը: Առաջարկվեց նաև տնտեսական զարգացման ծրագրերի խթանում իրականացնել անտառամերձ համայնքներում՝ բնակչությանը անտառհատումից զերծ պահելու, զբաղվածության և եկամուտների ավելացման նպատակով:

2016թ. նոյեմբերի 10-ին Վանաձորի Օրհուս կենտրոն աշխատանքային հանդիպում է իրականացվել ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվական վերլուծական ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են Վանաձոր համայնքի բնապահպանական հիմնախնդիրները, կենտրոնի գործունեության տարածքային շրջանը, կենտրոնի գործունեությունը և խնդիրները: Քննարկվեց կենտրոնի կողմից մշակված՝ համայնքներում կանաչ տարածքների պահպանությանն ուղղված առաջարկը:

2016թ. նոյեմբերի 15-17 ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ֆինանսավորմամբ կենտրոնի համակարգողը մասնակցել է Ժնևում տեղի ունեցած կլոր սեղանին: Այն իրականացվել է Օրհուսի կոնվենցիայի և Կարթագենի արձանագրության հովանու ներքո: Կլոր սեղանն ուղղված էր գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների խնդիրներին: Կլոր սեղանի ընթացքում ներկայացվեց մասնակից երկրների փորձը գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների շրջանառության կարգավորման ոլորտում: Քննարկվեցին տեղեկատվության մատչելիության ապահովման հարցերը:

2016թ. նոյեմբերի 26-ին Կենտրոնի համակարգողը մասնակցել է «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլանի մշակում Վանաձոր քաղաքի համար» ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացին: Դասընթացը նվիրված էր նպատակների ծառ հասկացողության, դրա կազմմանը, նպատակների սահմանմանը, դրանց փոխադարձ և պատճառահետևանքային կապերի բացահայտմանը: Իրականացվեցին Վերացական քաղաքի համար նպատակների ծառի ստեղծում և Վերացական քաղաքի համար գործողությունների պլանի մշակում գործնական աշխատանքներ: Ծրագիրն իրականացվում է ՌԵԿ Կովկաս հիմնադրամի կողմից:

Պերճ Բոջուկյան

Համակարգող,
Վանաձորի Օրհուս բնապահպանական
տեղեկատվության կենտրոն